



**ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ՈԼՈՐՏ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ (հայեցակարգային մոտեցումներ)**

*Գազիկ Հարությունյան  
«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն*

Ինչպես հայտնի է, ԽՍՀՄ փլուզումից հետո ՀՀ բնակչության թիվը նվազել է շուրջ 500 հազարով և ներկայումս կազմում է մոտ 3 մլն<sup>1</sup>: Այս իրողությունն ավելի քան մտահոգիչ է, և այն պետք է ընդունել որպես Հայաստանին ուղղված ներքին մարտահրավերներից, թերևս, ամենագլխավորը: Ի թիվս այլ հանգամանքների (որոնց կարևորությունը նույնպես չպետք է անտեսել), բնակչության նվազումն, առաջին հերթին, պայմանավորված է արտագաղթով: Երևույթի պատճառները բազմաբնույթ են, սակայն որոշիչը սոցիալ-տնտեսական իրավիճակն է. ՀՀ-ում մեկ շնչին ընկնող ՀՆԱ ցուցանիշն աշխարհում, համաձայն միջազգային կառույցների կողմից հրապարակված տարբեր վարկանիշային ցուցակների, 115-րդ հորիզոնականից ցածր է<sup>2</sup>: Նման իրավիճակը պայմանավորված է պատճառահետևանքային փոխադարձ կապի մեջ գտնվող բազմաբնույթ գործոններով՝ ԽՍՀՄ փլուզումը և պատերազմական կամ կիսապատերազմական իրողության պահպանումն առայսօր, մտավոր ռեսուրսների նվազումը, որի հետևանքով, մասնավորապես, ձևավորվել է ոչ այնքան արդյունավետ տնտեսական և կառավարման համակարգ: Առանձնահատուկ ուշադրության են արժանի նաև տեղեկատվական քաղաքականության թերացումները, որոնք նպաստում են բարոյահոգեբանական իրավիճակի վատթարացմանը և այլն...

Վերոնշյալ հիմնախնդիրների գենեզիսի վերհանումը և դրանց փորձագիտական համալիր գնահատականներ տալը խիստ ակտուալ խնդիրներ են, քանի որ նման գնահատականների բացակայությունը սկզբունքորեն դժվարացնում է իրականության ադեկվատ ըմբռնումը ու համապատասխան արձագանքումը: Կասկած չի հարուցում, որ ստեղծված իրավիճակում հանրապետությունում ընդունված գծային կամ այլ կերպ անվանվող՝ «կայուն զարգացման» կամ «ծառայությունների մատուցման հասարակության» մոդելները, ինչպես վկայում է Երրորդ Հանրապետության մոտ 25-ամյա փորձը, չեն կարող լուծել կուտակված խնդիրները: Իրենց հերթին, ոչ գծային մեթոդները ենթադրում են համակարգային-գաղափարախոսական վերակառուցում, որի համար այսօր, ցավոք, անհրաժեշտ նախադրյալներ չկան:

Ակնհայտ է, որ վերոնշյալ հիմնախնդիրներին հիմնավորված և կիրառական լուծումներ տալը ենթադրում է համալիր հետազոտություններ և քննարկումներ որոշումներ ընդունողների, փորձագետների և հանրության ներկայացուցիչների մասնակցությամբ: Հետևաբար, հողվածում առաջարկվող հայեցակարգային թեզերը, որոնցում ժողովրդագրական խնդիրների լուծումը

գլխավորապես պատկերացվում է մտավոր ռեսուրսների զարգացման համատեքստում, ինչ-որ առումով միջանկյալ բնույթ են կրում:

Միննույն ժամանակ, ինչպիսին էլ որ լինեն վերոնշյալ հետազոտությունները և վարկածները, որպես նախնական քայլ պետք է փորձել հստակեցնել մեր իրողությունները բնութագրող և տեղեկատվական տարածքում կիրառվող հասկացությունների բովանդակությունը, ըմբռնել ընդունված եզրաբանության իմաստը, կամ, այլ խոսքերով, փորձել ճշգրտել մեր հանրության «տեղեկատվական կոորդինատները»: Մասնավորապես, ինչպես հայտնի է, տեղեկատվական տարածքում շրջանառվող հասկացություններն և նրանց տրվող մեկնաբանությունները ոչ միայն որոշակի չափով ձևավորում են ներկան, այլև ուրվագծում են ապագան [1]:

## 1.1. «Ապսիդոստրիալացված» և «քվազիտեղեկատվական» հանրություն

Հայաստանի ներկա տնտեսական իրավիճակն առայսօր սահմանվում է որպես «անցումային փուլ», և ընդունվող սոցիալ-տնտեսական որոշումները հաճախ ենթարկվում են այդ հասկացության տրամաբանությանը: Մինչդեռ, սա ճշգրիտ բնութագրում չի կարող լինել առնվազն այն պատճառով, որ համապատասխան «անցումային բարեփոխումներն» իրականանում են արդեն մոտ քառորդ դար, իսկ «անցումային» եզրը պարունակում է ժամանակահատվածի տևողության սահմանափակումներ: Երբեմն կիրառվում է նաև կրկին ոչ այնքան հիմնավորված և ավելի շուտ գովազդային բնույթ կրող «զարգացող տնտեսություն» եզրը, որը նույնպես աղեկվատ չէ իրողություններին՝ հաշվի առնելով վերը նշված մեկ շնչին ընկնող ՀՆԱ ցուցանիշները, որոնք վերջին տարիներին բարելավման միտում չեն ցուցաբերում:

Ըստ մեր մոտեցման, Հայաստանը ներկա տնտեսական իրավիճակի առումով կարելի է բնութագրել որպես «**ապսիդոստրիալացված**» երկիր. բավական է նշել, որ համաձայն տարբեր աղբյուրների, ՀՀ ՀՆԱ-ում արդյունաբերության չափաբաժինը 40%-ից իջել է մինչև 20%, իսկ այս վերջին մասնաբաժնում նկատելիորեն նվազել է բարձրտեխնոլոգիական արտադրանքը: Այս երևույթը բնորոշ է նաև հետխորհրդային մի շարք այլ երկրների, որտեղ կազմալուծվեց ոչ այնքան մրցունակ և չդիվերսիֆիկացված արդյունաբերական համալիրը, սակայն լիարժեք նորը չստեղծվեց: Այս առումով բացառություն է Բելառուսը, որտեղ հաջողվեց որոշ չափով կիրառել տնտեսության «չինական մոդելը», սակայն առանց վերջինիս բնորոշ գաղափարախոսական և մերիտոկրատական բովանդակության (տես, օրինակ՝ [2]): Արևմտյան պատժամիջոցներից հետո վերինդոստրիալացման քաղաքականություն են փորձում իրականացնել նաև ՌԴ-ում, որտեղ ակտուալացվել է ռազմարդյունաբերական համալիրի ինքնաբավ լինելու

ինդիքը: «**Ապսիդոստրիալացված**» հասկացությունը թույլ է տալիս ճշգրտել նաև հայկական հանրության «զարգացածության կարգավիճակի» կոորդինատները: Լրատվական դաշտում հանդիպում ենք «ՀՀ հանրությունը դասվում է «պոստինդոստրիալ» կամ «տեղեկատվական» երկրների շարքին» ձևակերպմանը: Նշենք, որ նման ձևակերպումը, եթե ելնենք օգտագործված եզրերից, ենթադրում է, թե հանրությունում գերակայում է նոր գիտելիքների՝ տեղեկատվության արտադրումը: Նկատենք, որ բնականոն զարգացման պարագայում նման սահմանումն, անշուշտ, արդարացված կլինեք, քանի որ անգամ այսօր ՀՀ-ն գիտատեխնիկական ակտիվության վարկանիշով աշխարհում գրավում է 75-րդ տեղը<sup>3</sup> (Քուվեյթից հետո և Եթովպիայից առաջ): Սակայն դա ավելի շատ պայմանավորված է խորհրդային տարիներին զարգացած գիտակրթական-տեխնոլոգիական համակարգի դեռևս պահպանված որոշ ավանդույթներով, քան նոր ձեռքբերումներով: Այսպիսով, ցավով կարելի է փաստել, որ ներկա իրավիճակում ՀՀ-ում իրականացվում է ավելի շատ արդեն հայտնի տեղեկատվության «բազմացում», քան նորի ստեղծում: Նման իրավիճակը, հաշվի առնելով այն, որ հանրությունը կորցրել է իր «ինդոստրիալ» կարգավիճակը, այսինքն՝ չի կարող կոչվել

«պոստինդուստրիալ», թույլ է տալիս այսօր հասարակությունը սահմանել որպես «թվացյալ տեղեկատվական» կամ **«քվազիտեղեկատվական»** ([3]):

Տնտեսության և հանրության կարգավիճակները բնութագրող վերոնշյալ «պատրանքային» հասկացությունները, որոնք հիշեցնում են կոմունիստական դարաշրջանում տարածված «միֆոլոգեմները», ակնհայտորեն չեն նպաստում իրողությունների աղեկվատ ընկալմանը և, ընդհանուր առմամբ, համապատասխան որոշումների ընդունմանը: «Միֆոլոգեմներով» են պայմանավորված նաև տեսակետներն այն մասին, թե այն, ինչ տեղի է ունենում ՀՀ-ում ժողովրդագրական առումով, համահունչ է համաշխարհային «թրենդներին», պայմանավորված է «մարդու իրավունքների շրջանակներում տեղաշարժվելու իրավունքով», և այդպիսով, չպետք է առանձնապես մտահոգվել արտագաղթի իրողությունով: Միանգամայն այլ հետևության կարելի է գալ, եթե փորձենք ժողովրդագրության խնդիրների համատեքստում հստակեցնել մեր աշխարհաքաղաքական իրողությունները և կոորդինատները:

## **1.2. Հայաստանի «աշխարհաքաղաքական կոորդինատները» և ժողովրդագրական խնդիրները**

Ժողովրդագրական հիմնախնդիրների կարևորության տեսանկյունից Հայաստանի համար առանձնահատուկ կարևորություն են ձեռք բերել ներկայիս ռազմաքաղաքական իրողությունները: Փորձենք համառոտ դիտարկել այս խնդիրը:

Աղբյուրների և ԼՂՀ-ի հետ կապված հայտնի զարգացումների արդյունքում Հայաստանը գտնվում է կիսապատերազմական իրավիճակում: Դրան զուգահեռ՝ մեր հարևանությամբ գտնվող Մերձավոր Արևելքում, համաձայն զարգացումների տրամաբանության, որոնք ամրապնդվում են անգամ ԱՄՆ բարձրագույն ղեկավարության կանխատեսումներով, տուրբուլիզացված պատերազմական իրավիճակը դեռևս բավական երկար է տիրելու<sup>4</sup>: Այդ տարածաշրջանում ընթացող ռազմական գործողությունները, որոշ սցենարների համաձայն, կարող են տեղափոխվել նաև կովկասյան տարածաշրջան: Ի լրումն, այսօր պատերազմական բնույթ են կրում նաև ռուս-ուկրաինական հարաբերությունները: Նկատենք նաև, որ վերլուծաբանական հանրությունում ընդունված է այն մոտեցումը, թե ներկայիս զարգացումները կարող են տարածվել նաև ողջ գլոբալ հարթությունում [4]: Այսինքն՝ կարելի է փաստել, որ ռազմաքաղաքական առումով Հայաստանը, ըստ ամենայնի, գտնվում է խիստ «ռիսկային գոտում», ինչը ենթադրում է, նվազագույնը, կանոնավոր և մարտունակ բանակի առկայություն [5,6]: Վերջինս էլ, ինչպես քաջ հայտնի է, իր հերթին, ուղղակիորեն պայմանավորված է երկրի բնակչության թվով:

Հատկանշական է, որ այն պարագայում, երբ տարբեր միջազգային կազմակերպությունների կանխատեսումներով՝ երկրագնդի բնակչությունը տեսանելի ապագայում՝ 2030թ., աճելու է մոտ 1.2 մլրդ-ով և կազմելու է շուրջ 8.3 մլրդ<sup>5</sup>, ՀՀ բնակչությունը նվազելու է. ՄԱԿ 2012թ. կանխատեսումներով՝ Հայաստանի մշտական բնակչությունը 2030թ. կազմելու է 2.81 մլն մարդ: Սակայն այդ կանխատեսումը հիմնված է այն ենթադրության վրա, թե արտագաղթը 2010-2020թթ. կազմելու է տարեկան 10.000, իսկ 2020-2030թթ.՝ տարեկան 5.000 անձ: Մինչդեռ, 2010-2013թթ. ընթացքում Հայաստանից արտագաղթը կազմել է միջինը 40.000 անձ: Համաձայն ոլորտի փորձագետ Սամվել Մանուկյանի կատարված գնահատականների, ՄԱԿ միգրացիոն գնահատականների համապատասխան մոդիֆիկացում կատարելու պարագայում, ՀՀ բնակչությունը (որն, ի դեպ, հաշվի առնելով արտագնա աշխատանքների գործոնը, ավելի քիչ է մշտապես գրանցված բնակչությունից մոտ 200.000 անձով) 2030թ. կարող է, որոշ սցենարներում, կազմել ընդամենը 2 մլն. (տե ս սույն համարում Սամվել Մանուկյանի «Արդյունաբերական զարգացումը որպես Հայաստանում ժողովրդագրական վիճակի և դրա միտումների բարելավման գործոն» հոդվածը և «Հայաստանի

Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի բարելավմանն ուղղված հետազոտական ծրագիր» հետազոտության 2-րդ Գլուխը):

Ակնհայտ է, որ նման ցուցանիշը բավարար չէ ռազմական իրավիճակներին հարիր զինուժի ձևավորման և հետևաբար՝ գոյատևման համար: Այստեղ խիստ կարևոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ, չնայած հարևան Ադրբեջանում կատարվող վիճակագրական տվյալների գեղծարարությանը, այդ երկրում ժողովրդագրական իրավիճակը, բոլոր դեպքերում, անհամեմատ ավելի բարվոք է, և բնակչության թիվը տեսանելի ապագայում կարող է գերազանցել 8 մլն-ը [7]:

Այսպիսով, պետք է ընդունել, որ հայաստանյան աշխարհաքաղաքական իրողությունների տրամաբանությունը թելադրում է *առաջնային* տեղ տրամադրել ժողովրդագրական խնդիրներին՝ *ազգային անվտանգության (ԱԱ)* տեսանկյունից: Ակնհայտ է, որ այս առումով հայկական իրողությունները սկզբունքորեն տարբերվում են, մասնավորապես, եվրոպական պետություններում առկա իրողություններից: Այդ երկրներում, անշուշտ, ծնելիության նվազման, ծերացման և հատկապես ի հաշիվ աֆրոասիական միգրանտների բնակչության կազմի փոփոխման, ինչպես նաև ժողովրդագրական այլ խնդիրները նույնպես կարևոր նշանակություն ունեն ազգային անվտանգության համատեքստում, սակայն դեռևս չեն կրում այն աստիճանի կրիտիկական բնույթ, ինչպիսին առկա է ՀՀ-ում: Այս ամենից հետևում է, որ ժողովրդագրական հետազոտություններում ընդունված միջազգային փորձի և մեթոդաբանության կիրառումը հայկական իրողությունների պարագայում, անշուշտ, անհրաժեշտ է, բայց բավարար չէ: Ըստ մեզ, ինչպես արդեն նշել ենք վերը, Հայաստանին վերաբերող ժողովրդագրական հետազոտություններում պետք է առաջին հերթին կիրառվեն *ԱԱ* ոլորտում ընդունված մեթոդաբանությունները և համապատասխան եզրաբանությունը:

### 1.3 «Կրիտիկական» ոլորտներ և ենթակառուցվածքներ

Ելնելով վերոնշյալից՝ Հայաստանից արտագաղթի գործընթացը *ԱԱ* տեսանկյունից կարևորելու, ինչպես նաև այդ երևույթի նվազեցմանն ուղղված արդյունավետ մեթոդաբանություն և գործիքաշար ստեղծելու համար նպատակահարմար է ժողովրդագրության բնագավառում ներմուծել «կրիտիկական ենթակառուցվածքներ» (*ԿԵ*) հասկացությունը, որը հիմնարար նշանակություն ունի ԱԱ ոլորտում: Այս հասկացությունն առաջին անգամ<sup>6</sup> օգտագործվել է ամերիկյան RAND «ուղեղային կենտրոնի» փորձագետների կողմից, տեղեկատվական անվտանգության համատեքստում [8]: Եզրով հասկացվում է «ֆիզիկական կամ վիրտուալ համակարգերի և միջոցների այն ամբողջությունը, որոնք պետության համար կարևոր են այն չափով, որ նրանց շարքից դուրս գալը կամ ոչնչացումը կարող է հանգեցնել աղետալի հետևանքների պաշտպանության, տնտեսության, առողջապահության և ազգային անվտանգության ոլորտներում»: Այս խնդիրը հատկապես ակտուալացվել է 2001թ. սեպտեմբերի սահբեկչական գործողություններից հետո (տե՛ս Միացյալ Նահանգների «*USA PATRIOT Act*» 2001թ. օրենքը<sup>7</sup>):

Նշենք, որ այսօր ԱՄՆ-ում, հատուկ մշակված վերլուծաբանական մեթոդաբանության հիման վրա, *ԿԵ* կարգավիճակ է տրվել ամենազանազան ոլորտներին պատկանող մի քանի միլիոն օբյեկտի (որոնց մի մասը ընդհանրական ձևով ներկայացված է Աղյուսակ 1-ում), և այդ համատեքստում ընդունվել են շուրջ 10 հատուկ օրենք, կառավարական և գերատեսչական դիրեկտիվներ [9]:

ԱՄՆ՝ պաշտպանության ենթակա կրիտիկական ենթակառուցվածքների և հիմնական ֆոնդերի քանակական բնութագրիչները

Բնագավառի անվանումը	Կրիտիկական ենթակառուցվածքների օբյեկտները և հիմնական ֆոնդերը	Քանակը
Գյուղատնտեսություն և սննդամթերք	Ֆերմաներ	1,912, 000
	Սննդամթերքի արտադրության ձեռնարկություններ	87,000
Զրային ռեսուրսներ	Դաշնային ջրամբարներ	1,800
	Մունիցիպալ ջրատարներ	1,600
	Զրապատնեշներ	80,000
Հանրային առողջապահություն	Գրանցված հիվանդանոցներ	5,800
Մասսարկում արտակարգ իրադրություններում	Բնակավայրեր	87,000
Արդյունաբերության հենքի պաշտպանություն	Ֆիրմաներ և ձեռնարկություններ	250,000
Էներգետիկա	Էլեկտրակայաններ	2,800
Ավիացիա	Հանրային օդանավակայաններ	5,000
Մարդատար երկաթուղիներ	Հիմնական երկաթուղիները	120,000 մղոն
Ավտոմոբիլային ճանապարհներ, ավտոմոբիլային տրանսպորտ	Ճանապարհային կամուրջներ	590,000
Նավթագազային կառույցներ	Նավթամուղներ	2,000,000 մղոն
	Նավթի և գազի հանքեր	300,000
Ծովային տրանսպորտ	Ծովեզրի և կղզիների նավահանգիստներ	300
Քաղաքացիների զանգվածային փոխադրում	Տրանսպորտային ընկերություններ	500
Բանկեր և ֆինանսական համակարգ	Ֆինանսական ինստիտուտներ	26,000
Քիմիական և այլ վտանգավոր նյութեր	Քիմիական արտադրություն	66,000
Ազգային հուշարձաններ և նկարներ	Պատմական կառույցներ	5,800
Ատոմային էլեկտրակայաններ	Կոմերցիոն ատոմային էլեկտրակայաններ	104
Կառավարության սպասարկում	Կառավարությանը պատկանող միջոցներ	3,000

ԿԵ-ին վերաբերող հայեցակարգը ենթադրում է առանձնակի ուշադրություն այդ կառույցների նկատմամբ և դրանց անվտանգության ապահովում համապատասխան կազմակերպչական,

նյութական, տեխնիկական և այլ միջոցներով<sup>8</sup>: Ի դեպ, նշենք, որ ՀՀ-ում ընդհանրապես հրատապ է ԿԵ կառույցների գույքագրման և վերահսկման խնդիրը, ինչպես որ դա արվում է այսօր ոչ միայն ԱՄՆ-ում, այլև այլ առաջատար երկրներում, օրինակ Իսրայելում և Ռուսաստանում:

Միննույն ժամանակ, ըստ մեզ, նպատակահարմար է կրիտիկականի կարգավիճակ շնորհել ոչ միայն ոլորտի առանձին օբյեկտներին, այլև, արտակարգ իրավիճակներում, ընդհանրապես ոլորտին, ինչպես արվել է մեր կողմից տեղեկատվական անվտանգության որոշ հիմնախնդիրների առիթով (տե՛ս [10]): Այս տրամաբանությունից ելնելով՝ Հայաստանում **ԱՄ** համատեքստում *կրիտիկականի* կարգավիճակ պետք է տրվի ընդհանրապես ժողովրդագրական գործընթացների ոլորտին: Անշուշտ, նման մոտեցումն էլ ավելի է ակտուալացնում կրիտիկական ոլորտում այն կոնկրետ «ԿԵ»-ների առանձնացումն ու բացահայտումը, որոնց գործունեության անտեսումը որակապես մեծացնում, իսկ բարելավումը և խթանումը՝ էապես նվազեցնում են արտագաղթի ներկա տեմպերը:

Նկատենք, որ որոշ առաջատար երկրներում, օրինակ՝ ԱՄՆ-ում, վերաբերյալ ժողովրդագրական ոլորտի իրադրությունը պայմանավորող կառույցները ԿԵ-ների ցուցակում չեն ներգրավվել, քանի որ ոլորտը չի գտնվում կրիտիկական վիճակում: Սակայն դա ամեննին չի նշանակում, թե ոլորտին անհրաժեշտ ուշադրություն չի դարձվում: Օրինակ, ժողովրդագրական խնդիրները համալիր լուծում են գտել Իսրայելում (տե՛ս սույն համարում Կարեն Վերանյանի «Հայրենադարձության կազմակերպման իսրայելական փորձը» հոդվածը), որտեղ ոլորտին ավանդաբար մեծ ուշադրություն է դարձվում և որի տնտեսական զարգացման բարձր մակարդակը թույլ է տալիս իրագործել, մասնավորապես, մասշտաբային հայրենադարձության ծրագրեր: Այս վերջին հանգամանքը նույնպես հրատապ է Հայաստանի պարագայում, սակայն պետք է հաշվի առնել, որ առայժմ, ցավոք, ՀՀ-ն դեռևս գրավիչ չէ պոտենցիալ ներգաղթողների համար:

Հասկանալի է, որ նախորդ դարի 20-ական թվականներին, երբ Հայաստանը գտնվում էր ծանր իրավիճակում, սոցիալ-տնտեսական, այդ թվում՝ ժողովրդագրական հիմնախնդիրները լուծելու համար որդեգրվել էր **գարգացման** ռազմավարություն, որի կարևորագույն և որոշիչ բաղադրիչներից էր երկրի մարդկային կապիտալի և մտավոր ներուժի մակարդակների բարձրացումը (տե՛ս սույն համարում Ավագ Հարությունյանի «Ալեքսանդր Մյասնիկյանը և Երկրորդ Հանրապետության կայացումը» հոդվածը): Ուշագրավ է, որ արդի դարաշրջանում ժողովրդագրական խնդիրների լուծումը նույնպես սերտաճած է **գարգացման ռազմավարության** հետ, որի հենքը մարդկային կապիտալը և մտավոր ներուժն են (տե՛ս սույն համարում Սևակ Մարուխանյանի «Արդիականացումը, գիտությունը, գիտելիքը, մարդկային կապիտալը և ժողովրդագրության խնդիրների լուծումը. տարածաշրջանային երկրների փորձը» հոդվածը): Նման տեսական բնույթի մոտեցումներ ժամանակին արտահայտվել են նաև մեր կողմից [11]:

Թերևս, կասկած չի հարուցում, որ առանց անհրաժեշտ զարգացման մակարդակ ունեցող մարդկային ռեսուրսների՝ անհնարին է ձևավորել, մասնավորապես, երկրի տեխնոլոգիական ոլորտը, այն է՝ ոչ միայն «նյութականացված» (սարքեր և այլ ապրանքներ), այլև «չնյութականացված» (ծրագրային կամ տեսական մշակումներ) արտադրանք թողարկող բնագավառների համախումբը: Հատուկ նշենք, որ տեխնոլոգիական ոլորտին են պատկանում նաև հումանիտար ոլորտի, հատկապես «ուղեղային կենտրոնների» կամ, այսպես կոչված, *think-tank-ային* բնույթի կառույցները, որոնք կարող են մշակել քաղաքական, հասարակական և այլ բնույթի տեխնոլոգիաներ ու նպաստել դրանց իրագործմանը (տե՛ս, օրինակ, [12]):

Վերոնշյալ դիտարկումներից հետևում է, որ տեխնոլոգիական բնույթի և դրանք «սնող» գիտական հաստատությունները պետք է դասվեն կրիտիկական կառույցների շարքում և արժանանան հատուկ պետական ուշադրության:

Միննույն ժամանակ, կարելի է փաստել, որ առանց տեխնոլոգիական զարգացման՝ արդի ժամանակաշրջանում անհնար է պատկերացնել երկրի սոցիալ-տնտեսական և, մասնավորապես, **ԿԵ** կառույցների զարգացումը, ինչն էլ, իր հերթին, ժողովրդագրական իրավիճակի բարելավման նախապայման է հանդիսանում:

#### **1.4. Զարգացման ռազմավարության նախադրյալները**

Հարկ է շեշտել, որ տեխնոլոգիական ոլորտի զարգացումը գործնական հարթությունում նույնպես կարիք ունի մոտեցումների հիմնավորման և օպտիմալացման: Այս համատեքստում հարկ է նշել, որ՝

1. Հայկական հանրության պատմական կենսափորձը և հատկապես Երկրորդ հանրապետությունում ձևավորված գիտական և արտադրական ավանդույթները (որոնք մասամբ պահպանվել են՝ վկայում են այն մասին, որ տեխնոլոգիական ոլորտի զարգացման համար առկա են որոշակի նախադրյալներ:

2. Միննույն ժամանակ, հաշվի առնելով Հայաստանում առկա տնտեսական ռեսուրսների սակավությունը՝ ներկա փուլում տեխնոլոգիական զարգացումը դժվար է պատկերացնել ծավալուն և երկարատև նախագծերի միջոցով: Հետևապես, նախատեսվող տեխնոլոգիական նախագծերի արդյունքները պետք է տեսանելի լինեն արդեն մարտավարական հեռանկարում: Նման իրատեսական մոտեցումները, ի լրումն այլ հանգամանքների, այդ ծրագրերը գրավիչ կդարձնեն գործադիր իշխանությունների և բիզնես ոլորտի համար:

3. Ներկայացված խնդրում նաև խիստ կարևոր է, որպեսզի ստեղծվող տեխնոլոգիական կառույցների գործունեության «կողում» դրված լինեն ինքնազարգացման և բազմացման՝ **«մուլտիպլիկացիայի»** և **«ճյուղավորման»** մեխանիզմները: Ավելին, պետք է ձգտել, որպեսզի բարելավվող կամ ձևավորվող ոլորտային կառույցներն իրենց զարգացման որոշակի փուլից հետո ի վիճակի լինեն կատարել սոցիալ-տնտեսական և մտավոր-հոգեբանական առաջատարի՝ **«լոկոմոտիվի»** դեր և այդպիսով ստեղծեն նախադրյալներ հանրապետության ոչ գծային զարգացման համար:

Վերոնշյալ մոտեցումների «կոռեկտության» չափանիշ կարող են հանդիսանալ, այսպես կոչված, «պիլոտային» միկրոծրագրերի իրագործումը («ակտիվ կենտրոնների» ձևավորումը) և դրանց արդյունքների համալիր վերլուծությունը ներկայացված թեզերի համատեքստում:

#### **1.5. Կիրառական տեսանկյունից տեխնոլոգիական ոլորտի դասակարգումն ըստ սույն հետազոտության փուլային կատարման նպատակահարմարության**

Միննույն ժամանակ, 1.3 ենթաբաժնում նշված տեխնոլոգիական ոլորտի երեք բաղադրիչները՝ «նյութականացված», «չնյութականացված» և հումանիտար բնագավառները, նույնպես կարիք ունեն առաջնահերթության տեսանկյունից որոշակի դասակարգման: Ակնհայտ է, որ զարգացման ընդհանուր ռազմավարության տրամաբանությունը թելադրում է, որպեսզի նշված բնագավառները զարգանան զուգահեռաբար և միմյանց փոխլրացնեն: Սակայն, ելնելով նշված հանգամանքներից, **մարտավարական հարթությունում անհրաժեշտ է ընտրել այն բնագավառը, որին պետք է տալ առաջնայնություն ներկա պայմաններում աշխատանքն սկսելիս: Այս տեսանկյունից պետք է հաշվի առնել հետևյալ հանգամանքները.**

- «Հումանիտար» տեխնոլոգիաներն այն ոլորտն են, որտեղ կատարվող մշակումներն են, որ կարող են հենք հանդիսանալ տնտեսական վերելքի և ժողովրդագրության բարելավման համար: Սակայն այդ ոլորտում իրականացվող աշխատանքները և դրանցից ստացված օգուտները ներկա փուլում խիստ դժվար է ներկայացնել այնպիսի եզրաբանությամբ, որը

գրավիչ լինի հանրության, քաղաքական ընտրանու և բիզնես ոլորտի ներկայացուցիչների համար: Ելնելով այս նկատառումներից՝ «հումանիտար» ոլորտը ներկա փուլում նպատակահարմար չէ ներկայացնել որպես զարգացման ռազմավարության առաջնային խնդիր:

- «Չնյութականացված» (ծրագրային կամ տեսական մշակումներ իրականացնող) տեխնոլոգիաների այն հատվածը, որն առնչվում է համակարգչային-տեղեկատվական բնագավառի հետ, այսօր ՀՀ-ում համեմատաբար բարվոք վիճակում է: Ի լրումն, այդ ոլորտի հանրությունը բավականաչափ կազմակերպված է և կարողանում է պաշտպանել իր շահերն ամենագանազան ատյաններում և հարթակներում: Այսինքն, չնայած առկա բազմաթիվ հիմնախնդիրներին, ոլորտը գոնե նվազագույն չափով կարողանում է իրականացնել իր զարգացման ռազմավարությունը: Դրանից հետևում է, որ առաջին փուլում այդ բնագավառի վրա շեշտադրումներ կատարելը կարող է ընկալվել որպես «հայտնի իրողությունների կրկնություն» և սուր չընկալվել հանրության ու «քաղաքական դասի» կողմից:
- «Նյութականացված» տեխնոլոգիաների ոլորտը, թերևս, ամենաանտեսվածն է մեր հանրությունում և կարծես թե խորհրդանշում է երկրի «ապահիդուստրիալացված» լինելը: Մինչդեռ, այդ ոլորտում ստացված արդյունքները (մասամբ օգտվելով ոլորտի ձևակերպումից), «շոշափելի» կարող են լինել հասարակության բոլոր շերտերի համար: Ի լրումն, այդ ոլորտի կառույցներին բնորոշ են «մուլտիպլիկացիայի» և «ճյուղավորման» մեխանիզմները: Այս նկատառումներից ելնելով՝ նպատակահարմար ենք գտնում հենց այս ոլորտի բնագավառում սկսել գործնական աշխատանքները:

Միննույն ժամանակ գործնական քայլերին զուգընթաց անհրաժեշտ է մշակել բարձր տեխնոլոգիաների զարգացման միասնական քաղաքականություն, կազմավորել բարձր տեխնոլոգիաների ոլորտի կառույցների վերաբերյալ հատուկ մեթոդաբանությամբ մշակված սվալների շտեմարան և ձևավորել բարձր տեխնոլոգիաների ոլորտի օպտիմալ գործունեությունն ապահովող օրենսդրական դաշտ:

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ, <http://countrymeters.info/ru/Armenia 2014- 2973000>

<sup>2</sup> Տե՛ս, օրինակ, <http://worldgeo.ru/lists/?id=29&page=4>

<sup>3</sup> Рейтинг стран по уровню научно-исследовательской активности, <http://gtmarket.ru/ratings/scientific-and-technical-activity/info>.

<sup>4</sup> Համաձայն ԱՄՆ նախագահի հայտնի հայտարարության, իսլամիստների դեմ մղվող պատերազմը տևելու է նվազագույնը երեք տարի,<http://www.ntv.ru/novosti/1222701>: Մանրամասն տե՛ս Գ.Հարությունյան, «ԵՏՍ և ՀՀ. հնարավոր սցենարներ», Գլոբուս #11/12, էջ 3, 2014:

<sup>5</sup> <http://eurasian-defence.ru/sites/default/files/DS/Documents/global-trends-2030-rus.pdf>

<sup>6</sup> Նկատենք, որ եթե ոչ «ԿԵ»-ների, ապա առնվազն «կրիտիկական կետերի» գաղափարախոսությունը շրջանառվում է վաղ ժամանակներից. հիշենք «աքիլեսյան գարշապար» արտահայտությունը:

<sup>7</sup> <http://www.justice.gov/archive/ll/highlights.htm>

<sup>8</sup> А.Кондратьев, «Современные тенденции в исследовании критической инфраструктуры в зарубежных странах»,[http://pentagonus.ru/publ/sovremennye\\_tendencii\\_v\\_issledovanii\\_kriticheskoy\\_infrastruktury\\_v\\_zarubezhnoj\\_stranakh\\_2012/19-1-0-2082](http://pentagonus.ru/publ/sovremennye_tendencii_v_issledovanii_kriticheskoy_infrastruktury_v_zarubezhnoj_stranakh_2012/19-1-0-2082).



<sup>9</sup> «Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի բարելավմանն ուղղված հետազոտական ծրագիր» հետազոտություն:

## Աղբյուրներ և գրականություն

1. Бикбов А.Т., Грамматика порядка: Историческая социология понятий, которые меняют нашу реальность, М., Издательский дом Высшей школы экономики, 2014.
2. Гагик Арутюнян, «Распад «системы» и формирование будущего», «Нораванк», с.97, 2011.
3. Gagik Harutyunyan, ««Homo Virtualicus» in the context of Post – Democracy and Information Security», 21st Century, # 1 (9), p. 4, 2011.
4. Василий Микрюков, «И не будет сражениям конца», HBO, #34 (823), 2014. Տե՛ս նաև «Глобальный контекст»,
5. [http://www.noravank.am/rus/articles/detail.php?ELEMENT\\_ID=12902](http://www.noravank.am/rus/articles/detail.php?ELEMENT_ID=12902).
6. Gagik Harutyunyan, «Challenges to Armenia in the Globalizing World», 21st Century, #1(13), p. 4, 2013,
7. Gagik Terterov, «Some peculiarities of «Cold War 2»», 21st Century, #1 (15), p. 4, 2014.
8. Արա Մարջանյան, «Ադրբեջանական Հանրապետություն. «Վիրտուալ» ժողովրդագրության առանձնահատկությունները», Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 2012, Ara Marjanyan «Virtual» Demographics of the Azerbaijani Republic», Yerevan, SEF «Noravank», 2012.
9. Thomas P. Rona, «Weapon Systems and Information War», Boeing Aerospace Co., Seattle, WA, 1976.
10. А.Баранник, С.Клементьев, «Организация обеспечения безопасности критической инфраструктуры в США», Зарубежное военное обозрение, #8, с. 3, 2009.
11. Գագիկ Հարությունյան, Հայագիտությունը որպես «կրիտիկական ենթակառուցվածք», 21-րդ ԴԱԸ, # 6, էջ 4, 2013:
12. Gagik Harutyunyan, «Strategy of development and geopolitical scenarios», «21 st Century», #2(8), p. 4, 2010.
13. Гагик Арутюнян, «Мозговые центры» и национальная безопасность, «21-й Век», #1(17), с. 3, 2011.

2014թ. դեկտեմբեր

<http://www.noravank.am/>